ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ ԱՇՈՏԻ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը 00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>>
մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Էդգար Ֆերդինանտի Ղազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վարդան Բաբկենի Բոստանջյան

տնտեսագիտության թեկնածու

Մարիամ Համլետի Ավետիսյան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի դեկտեմբերի 12-ին ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի նոյեմբերի 11-ին:

015 Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետխորհրդային շրջանում Հայաստանի Հանրապետությունն որպես նոր հարաբերություններ ձևավորող երկիր, բախվեց տնտեսական նոր հարաբերությունների, երբ շատ գործընթացներ և երևույթներ պետք է գնահատվեին ու վերաիմաստավորվեին: Այդօրինակ երևույթներից է արտահանման քաղաքականությունը, որը չկրելով ամբողջական և համակարգված բնույթ, ըստ էության, դարձել է առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող որպես համեմատաբար ավելի մեծ շահույթ ենթադրող գործունեության տեսակ: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին իրականացվում է որոշակի քաղաքականություն, որը կարող է խթանել հանրապետության արտահանման ներուժի զարգացումը և այդ ուղղությամբ չափազանց կարևոր ռազմավարական քաղաքականության իրականացումը: Վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների համակարգված և կայուն զարգացումն, անշուշտ, կհանգեցնի նաև երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը:

Հայաստանում արտահանման ոլորտում իրականացված գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու ու հատկապես կայուն և հեռանկարային արտաքին տնտեսական կապեր հաստատելու համար անհրաժեշտ է ոչ միայն համակողմանի հիմնավորված արտահանման երկարաժամկետ համալիր ծրագիր և համապատասխան ռազմավարություն, այլ նաև ամբողջ գործընթացի մասնակիցների՝ պետության, հանքարդյունաբերության, գյուղատնտեսության, վերամշակող ձեռնարկությունների, ֆինանսական կազմակերպությունների, մաքսային ծառայությունների և արտաքին տնտեսական հարաբերությունները կարգավորող այլ մարմինների նպատակամետ և համակարգված գործունեություն: Ընդ որում, տվյալ հարցում պետք է հատկապես կարևորել պետության դերը, քանի որ առանց դրա անհրաժեշտ միջամտության յուրաքանչյուր երկրի ազգային հարստությունը, այդ թվում ընդերքը կշարունակվի շահագործվել ոչ ռացիոնալ և արդյունավետ: Կան բազմաթիվ չլուծված խնդիրներ գյուղատնտեսության ոլորտում, որտեղ գործող տնտեսավարող սուբյեկտների մասնատվածությունը, տրանսպորտային սահմանափակումների հետ կապված արտադրանքի իրացման դժվարությունները, ապահովագրական ծառայությունների բացակայությունը, գործունեության ընդլայման համար անհրաժեշտ միջոցների պակասը և նմանատիպ այլ խոչնդոտները գործնականում բացառում են առանց մեծ ռիսկերի միջազգային չափանիշների համապատասխան արտադրանքով արտաքին շուկաներ դուրս գալու հեռանկարը: Արագ փոփոխվող աշխարհում դժվար կառավարելի ռիսկերին դիմակայելու համար այդ ուղղությամբ դրական արդյունքների կարելի է հասնել միայն պետական համակողմանի երաշխիքների առկայության դեպքում, որոնք պետք է ենթադրեն հարկային տարբերակված ռեժիմների սահմանում, վարկավորման մատչելի աղբյուրների ձևավորում, ռիսկերի կանխարգելման ապահովագրական ծառայությունների ստեղծում, տրանսպորտային ուղիների արդիականացում և, որ ամենակարևորն է, այլ երկրների հետ ապրանքափոխանակության կայուն կապերի հաստատում:

Հետազոտությունը նվիրված է Հայաստանի վերամշակող ձեռնարկություններում արտահանման ռազմավարության մշակման և կենսագործման, արտահանման

համակարգված քաղաքականության իրականացման, ինչպես նաև այդ գործընթացների հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի ***հրատապությունն ու արդիականությունը:***

Հետազոտության նպատակը և խնդիրներ: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական հարաբերությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության վերամշակող ձեռնարկությունների արտահանման ռազմավարության և արտաքին շուկաներ դրանց դուրս գալուն ուղղված պետական քաղաքականության առանցքային միջոցառումների մշակման ու իրականացման հիմնահարցերի լուծումն է, որի համար ատենախոսությունում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել արտահանման ռազմավարական սկզբունքները և գնահատել Հայաստանում դրա արմատավորման առանձնահատկությունները,
- վերլուծել արտահանման ռազմավարության մշակման և իրականացման մեթոդներն և ապարատը,
- ուսումնասիրել արտահանման միջազգային փորձը և արժորոշել Հայաստանում դրա տեղայնացման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը և գնահատել դրանում վերամշակող ձեռնարկությունների մասնակցության հեռանկարները,
- գնահատել արդյունաբերության զարգացման գործում վերամշակող ձեռնարկությունների նշանակությունը և մշակել դրանց փոխկապակցվածության և փոխպայմանավորվածության ամրապնդման մեխանիզմներ,
- առաջարկել պետության կողմից իրականացման ենթակա արտահանման քաղաքականության հիմնական գործառույթները և մշակել հանրապետության վերամշակող ձեռնարկությունների արտահանման հնարավորությունների ընդլայնման միջոցառումներ,
- բացահայտել արտահանման գործընթացի հետ կապված էական ռիսկերը և առաջարկել դրանց կառավարման արդյունավետ մոտեցումներ,
- մշակել հանրապետության վերամշակող ձեռնարկությունների արտահանման ռիսկերի ապահովագրության առաջնահերթ միջոցառումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը՝ Հայաստանի Հանրապետության արտահանման համակարգն է, իսկ առարկան՝ վերամշակող կազմակերպությունների արտաքին տնտեսական գործունեությունը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել արտահանման ռազմավարության մշակման ուղղությամբ իրականացված հայրենական և արտասահմանյան գիտական աշխատությունները, միջազգային մասնագիտական կազմակերպությունների գիտավերլուծական, մեթոդաբանական նյութերը, ինչպես նաև պետության արտաքին տնտեսական քաղաքականության նպատակները, գործիքակազմը և ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները և իրավական այլ ակտերը: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերը և տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համեմատական, համակարգային, քանակական և գործոնային վերլուծության մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առաջարկված մոտեցումների գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- արտահանման ներուժի զարգացման և արտաքին շուկաներում կայուն դիրք գրավելու նպատակով առաջարկվել են արտահանման ռազմավարության ներդրման նոր մոտեցումներ, որոնց հիման վրա կարելի է մշակել արտահանման ենթակա արտադրանք ստեղծելու համակարգված միջոցառումների երկարաժամկետ համալիր ծրագրեր,
- Հայաստանի վերամշակող ձեռնարկությունների գործունեության կայունության ապահովման նպատակով <<արտադրող-վերամշակող-մատակարարող-սպառող>> շղթայում հնարավոր ռիսկերի համակողմանի գնահատմամբ նախանշվել են հանրապետության ագրոբիզնեսի ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղություններ,
- Հայաստանի վերամշակող ձեռնարկություններում հիմնավորված արտահանման քաղաքականության իրականացման նպատակով քանակական վերլուծության հիման վրա մշակվել է արտահանման այլընտրանքային շուկաների ընտրության կառուցակարգ,
- արտահանման խթանման նպատակով միջպետական նշանակության ավտոճանապարհային ցանցի ընդլայնման և պահպանման համար առաջարկվել է ստեղծել հատուկ հիմնադրամ, որի ֆինանսավորման հիմնական աղբյուր կարող են լինել ավտոտրանսպորտային միջոցների շահագործման և բեռնափոխադրումների դիմաց գանձվող գումարները,
- ՀՀ արտահանման ներուժի զարգացման նպատակով մշակվել է արտահանման հետ կապված գործընթացները կարգավորող և դրանցով ենթադրվող գործառույթները համակարգող կառույցի գործարար մոդել, որի մասնագիտացված ստորաբաժանումների կոորդինացված գործունեության արդյունքում հանրապետությունում կխթանվի արտահանման գործընթացը և կբարձրանա դրա արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Պետական արտաքին տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման և հանրապետության վերամշակող կազմակերպությունների արտահանման ներուժի զարգացման հետ կապված հիմնախնդիրների լուծման վերաբերյալ ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունները և մշակված առաջարկությունները ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնք կարող են հիմք հանդիսանալ արտահանման ռազմավարական ծրագրերի և այդ ուղղությամբ նպատակամետ պետական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, ինչպես նաև հանրապետության տնտեսավարող սուբյեկտների

կողմից արտաքին տնտեսական կապերի զարգացման և հավասարակշռված արտահանման քաղաքականության մշակման և իրականացման համար: Դրանք կարող են օգտագործվել համապատասխան հետազոտություններով զբաղվող տնտեսագետ-գիտնականների, ասպիրանտների ու ուսանողների կողմից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում և հրապարակվել են երեք գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի տեքստը շարադրված է 113 մեքենագիր էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության օբյեկտը և առարկան, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Արտահանման ռազմավարության մշակման տեսամեթոդական հիմքերը», գլխում լուսաբանվել է արտահանման ռազմավարության էությունը և իրականացման առանձնահատկությունները, վերլուծվել է արտահանման ռազմավարության մշակման մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա կենսագործմանը միտված պետական քաղաքականության գերակայությունները և իրավական հիմքերը:

Ժամանակակից կյանքում տնտեսական հարաբերությունների համակարգում յուրաքանչյուր կազմակերպության արդյունավետության գնահատման գործում էական է դարձել նրա արտահանման ռազմավարության դերը: Ամենաընդհանուր գծերով իսկ դրա գնահատումն ենթադրում է, առաջին հերթին, կողմնորոշվել, թե տվյալ կազմակերպության տնօրինության տակ գտնվող և հետագայում ակնկալվող ռեսուրսների պայմաններում ինչպիսին է նրա արտաքին շուկաներ մուտք գործելու և դրանց պահանջները բավարարելու հավանականությունը: Ակնհայտ է, որ այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է ունենալ համակողմանիորեն հիմնավորված արտահանման ռազմավարություն: Վերջինս, իր հերթին, ենթադրում է տեղեկատվական ժամանակակից բազայի առկայություն, որն ի վիճակի է օպերատիվորեն հավաքագրել, վերլուծել և պատրաստել անհրաժեշտ ինֆորմացիա արտաքին շուկաների և դրանցում ձևավորված պահանջների վերաբերյալ: Այդպիսի տեղեկատվությանը զուգահեռ կազմակերպությունը պետք է հետևի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումներին, ինչպես նաև տեխնոլոգիական և մրցակցային պայմանների փոփոխություններին :

Արտահանման ընթացքում կազմակերպությունը կարող է անցնել մի շարք փուլերով, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները: Ընդ որում, որոշակի վերապահումների դեպքում այդ տարանջատումը կարող է կրել

պայմանական բնույթ և մինչև անգամ կազմակերպության ղեկավարությունը կարող է հստակ չկողմնորոշվել թե արդյոք որ փուլում են իրենք գտնվում: Մասնավորապես, կազմակերպությունն ելնելով սեփական արտադրանքի իրացման ծավալներից և շուկայի պահանջներին դրա որակի համապատասխանության աստիճանից կարող է փորձել դուրս գալ արտաքին շուկաներ: Անկախ այն հանգամանքից, որ այս դեպքում իրացումը կարող է լինել խոստումնալից, այդուհանդերձ, այդ փուլը դեռևս պետք է համարել փորձնական, քանի որ հետագայում տվյալ արտադրանքի նկատմամբ պահանջարկը կարող է կտրուկ փոքրանալ կամ ընդհանրապես վերանալ: Բնականաբար այս փուլում եկամուտները չեն կարող լինել էական, իսկ ծախսերը մնում են անհամեմատ բարձր: Պետք է նշել, որ արտահանմանն ուղղված ցանկացած գործունեություն ընդհանրապես կապված է զգալի ծախսերի հետ, պայմանավորված արտաքին շուկաներ մուտք գործելու համար ենթադրվող խիստ պահանջների կատարմամբ:

Արտահանման այսպես կոչված «Էքստենսիվ» և «ինտենսիվ» վաճառքի փուլերը կազմակերպությունների հետագա գործունեության համար ունեն կարևոր նշանակություն, քանի որ հենց այդ ընթացքում է պարզ դառնում նրանց կողմից նախաձեռնված գործարքի հեռանկարային լինելու հանգամանքը: Էքստենսիվ վաճառքի փուլում իրացումն, որպես կանոն, կատարվում է ոչ մեծ շուկաներում, որոնք կարող են ունենալ հիմնական, երկրորդային կամ երրորդային կարգավիճակ: Բնական է, որ այս փուլում ևս եկամուտները չեն կարող լինել էական: Ինտենսիվ վաճառքի փուլում արտահանվող արտադրանքի տեսականին լինում է սահմանափակ, պայմանավորված իրացման շուկաների կողմից սահմանված ժամանակային և ծավալային չափանիշներով: Արտահանումն այս փուլում իրականացվում է հստակ ձևակերպված պայմանագրերի համաձայն, որոնք կարող են վերակնքվել և շարունակվել, կախված իրացման շուկաներում տվյալ պահին ձևավորված առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունից:

Արտահանման գործընթացներում տարբերակում են նաև փուլեր, որոնք կախված են կազմակերպության մարքեթինգային քաղաքականությունից: Արտահանման մարքեթինգի դեպքում արտահանվող շուկաների հետ կազմակերպությունը գտնվում է երկկողմ կայուն հարաբերությունների մեջ: Ապրանքն այս դեպքում համապատասխանում է իրացման շուկայի սպառողների պահանջներին և կազմակերպությանն ընձեռվում է միջազգային մարքեթինգային հաղորդակցության միջոցներից օգտվելու հնարավորություն: Միջազգային մարքեթինգի դեպքում ներքին շուկան կորցնում է իր առաջնային նշանակությունը և կազմակերպության մարքեթինգային քաղաքականության ձևավորման գործում սկսում են ակտիվ դեր ունենալ օտարերկյա շուկաները: Արտահանումն իր բարձրագույն դիրքին է հասնում գլոբալ մարքեթինգային փուլում, երբ կազմակերպությունն այլևս չի կենտրոնանում տեղական շուկայի վրա և բացառապես կողմնորոշվում է արտաքին շուկաների սպառողների պահանջմունքների բավարարմանը:

Հարկ է սակայն նշել, որ արտահանման ռազմավարության փուլերի դեռևս ոչ հստակ տարանջատված լինելու հանգամանքը պահանջում է դրանց գնահատման առանձգական և հիմնավորված չափորոշիչների սահմանում: Այդ առումով,

արտահանման զարգացման և դրա հետ կապված գործընթացների խթանման հարցերով զբաղվող մասնագետների կողմից առաջարկվում է[1].

- ընդհանուր մակրոտնտեսական քաղաքականության հիման վրա արտահանման ռազմավարության նախընտրելի ուղղության ընտրություն (պետական, շուկայական կամ դրանց համադրված կարգավորում),
- արտահանման զարգացման խոչընդոտող ներքին և արտաքին գործոնների բացահայտում և գնահատում,
- արտահանման տեսանկյունից նախընտրելի արտադրությունների և կազմակերպությունների բացահայտում,
- արտահանման խթանման կամ դրա փոխարեն մեկ այլ տնտեսական ծրագրի իրագործման համար ենթադրվող ծախսերի և արդյունքում սպասվող եկամուտների համեմատություն,
- արտահանման տեսանկյունից նախընտրելի ապրանքների և ծառայությունների, արտահանման երկրների և տարածաշրջանների ընտրություն,
- արտահանման խթանման հիմնական հարաբերությունների իրավական կարգավորում:

Շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում իրականացվեցին որոշակի բարեփոխումներ, կատարվեցին համակարգային վերափոխումներ, ստեղծվեցին նոր սկզբունքներով կարգավորվող ազատական տնտեսությունում գործունեություն ծավալելու պայմաններ և այլն: Հանրապետությունում սոցիալ–տնտեսական իրավիճակի բարելավման և պարենային անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով, բարեփոխումներն, առաջին հերթին, իրականացվեցին գյուղատնտեսության ոլորտում: Դրան հաջորդեց փոփոխությունները նաև այլ ոլորտներում, ինչը հետապնդում էր հանրապետության տնտեսական համակարգի արդիականացման նպատակ: Անկախ այդ նպատակի իրագործման հետ կապված մինչև օրս շարունակվող դժվարություններից ՀՀ կառավարությունը փորձ է արել իրականացնել որոշ քայլեր հանրապետության արտահանման ներուժի ընդլայնման ուղղությամբ: Սակայն ամենատարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դրանք չեն հանգեցրել ցանկալի արդյունքների: Ակնհայտ է, որ տվյալ խնդրում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է միջոցառումների համալիր երկարաժամկետ ծրագիր, որը թույլ կտա խթանել արտահանման ներուժ ունեցող ձեռնարկությունների զարգացումը և նպաստել արտաքին շուկաներում դրանց մրցունակության բարձրացմանը:

Արտահանման նպատակամետ և արդյունավետ քաղաքականության իրականացման կարևորագույն նախապայմանը մակրոտնտեսական կայուն միջավայրի առկայությունն է: Մասնավորապես, միայն գների և փոխարժեքի անկախատեսելի ու անկառավարելի տատանումներն իսկ կարող են խաթարել հայկական ապրանքների ու ծառայությունների մրցունակությունը միջազգային շուկայում: Այս առումով, հատկապես կարևորվում է արտահանման ներուժ ունեցող հայրենական վերամշակող կազմակերպությունների կարողությունների զարգացումը և

[1] Տե՛ս, Покровская В.В. Организация и регулирование внешнеэкономической деятельности, М., ЮНИТИ., 2006, ст 35-44
Моисеева Н.К, Международный маркетинг: М.Центр Экономики у маркетинга, 1998, 320 с

արտաքին տնտեսական գործունեության մեջ վերջիններիս ներգրավումը: Ակնհայտ է, որ այդ ուղղությամբ հիմնավորված արդյունավետ պետական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ են վերամշակող ձեռնարկությունների զարգացման ռազմավարություն, հանրապետությունում որակի միջազգային սերտիֆիկացման և վերահսկողության ստանդարտներին համապատասխանող համակարգերի ներդրում, նոր շուկաներ մուտք գործելու մատչելիությունն ապահովող մեխանիզմներ և այլն:

Նշված նպատակներին հասնելու համար վերամշակման ոլորտում արտահանմանն ուղղված քաղաքականության հիմնական կողմնորոշիչներ պետք է դառնան.

- մասնավոր հատվածի հետ պետության համակողմանի համագործակցությունը,
- արտահանման ներուժ ունեցող վերամշակող կազմակերպությունների գործունեության արդիականացումը և ռազմավարության կատարելագործումը,
- արտահանման ներուժ ունեցող վերամշակող նոր կազմակերպությունների ստեղծումը և դրանց զարգացմանը պետական աջակցության ցուցաբերումը,
- տնտեսական ինտեգրացիայի խորացումը և անդրազգային ընկերությունների ներգրավումը:

Հայաստանում բարեփոխումների անցած ժամանակահատվածում արդեն իրականացվել են ինստիտուցիոնալ և իրավական բնույթի որոշ աշխատանքներ ուղղված հանրապետությունում արտահանման միջազգային ստանդարտների ներդրմանը և ԱՀԿ-ի ու Եվրամիության կողմից ընդունված չափանիշներին դրանց համապատասխանեցմանը: Այս հանգամանքն ևս շատ կարևոր է, քանի որ այդ դեպքում էականորեն կմեծանա Հայաստանում արտադրվող ապրանքների որակի և անվտանգության նկատմամբ վստահությունը, ինչն էլ, իր հերթին, կխթանի հանրապետությունում արտահանման ծավալների մեծացումն ու արտահանման շուկաների աշխարհագրության ընդլայնումը: Ներկայումս արտահանման գործում ավելի հաճախ խոչընդոտների են հանդիսանում հատկապես Հայաստանի գյուղատնտեսության և ագրովերամշակման ոլորտների ձեռնարկությունները, քանի որ հենց այս ոլորտում իրականացված բարեփոխումները դեռևս ամբողջությամբ չեն համապատասխանում Եվրամիության պահանջներին և արտահանման միջազգային նորմերին: Հայաստանում արտադրվող արտադրանքի արտահանման գործընթացը կանոնակարգելու, ինչպես նաև սպառողների ու պետության շահերը պաշտպանելու նպատակով գյուղմթերքների արտահանման խթանման քաղաքականության կարևոր քայլ պետք է համարել Երևանի Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման ծրագիրը: ՀՀ կառավարության այս քայլով հետապնդվում է արտահանումը խթանելու նպատակ, քանի որ հանրապետության վերամշակող կազմակերպություններն արտահանումը հիմնականում կազմակերպում են ցամաքային բեռնափոխադրումների միջոցով:

Ցամաքային բեռնափոխադրումներն իրականացվում են բացառապես ավտոմոբիլային տրանսպորտով: Հատկապես գյուղամթերքների արտահանումն, ինչը կապված է ամենատարբեր տեխնիկական պայմանների ապահովման հետ (ջերմային ռեժիմ, տեղափոխման արագություն և այլն) հնարավոր է միայն բեռնատարներով

տեղափոխման դեպքում, քանի որ հանրապետության երկաթուղային ցանցի դեռևս խիստ սահմանափակ հնարավորությունների պայմաններում բեռնափոխադրումներն այդ ճանապարհով դառնում են ոչ նպատակահարմար:

Ճանապարհային բեռնափոխադրումների զարգացումն, անշուշտ, պահանջում է միջազգային չափանիշներին համապատասխան մայրուղիների կառուցում և պահպանում: Զարգացած երկրներում ավտոմոբիլային ճանապարհների զարգացման խնդիրը հիմնական լուծում է պետական երկարաժամկետ ծրագրերի իրագործման միջոցով: Արագընթաց ավտոմոբիլային ճանապարհների շինարարությունը այդ երկրներում հանգեցրեց գործարար ակտիվության բարձրացման, աշխատանքի արդյունավետության աճի, ներդրումների ծավալների մեծացման, նոր աշխատատեղերի ստեղծման և այլն: Ելնելով համաշխարհային փորձից և Հայաստանում արտահանման ծավալների մեծացման կարևորությունից, աշխատանքում առաջարկվում է հանրապետությունում ստեղծել հատուկ հիմնադրամ, որի նպատակը պետք է լինի միջպետական նշանակության ավտոճանապարհները միջազգային չափանիշներին և պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքների կազմակերպումն ու ֆինանսավորումը: Սկզբնական շրջանում հիմնադրամը կարելի է ձևավորել վառելիքաքսուկային նյութերից, բեռների դիմաց գանձվող հարկերից, ինչպես նաև ճանապարհային կանոնների խախտման համար նախատեսված տուգանքներից և այլն: Հետագայում կարելի է սահմանել մեկ միասնական հարկ՝ կատարված վազքի դիմաց: Հիմնադրամի ստեղծման համար կպահանջվեն նաև որոշակի ներդրումներ, կապված ցանցային տեղեկատվական համակարգի ստեղծման հետ, որն արբանյակային կապի միջոցով կվերահսկի և կկարգավորի ավտոմոբիլային բեռնափոխադրումների շարժը: Այդ մոդելի ներդրումը կստեղծի լայն հնարավորություններ հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխան ավտոճանապարհների կառուցման ու պահպանման համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Վերամշակող կազմակերպությունների արտահանման ռազմավարության արդյունավետությունը» գլխում գնահատվել է վերամշակող կազմակերպությունների դերը հանրապետության արտաքին առևտրի կառուցվածքում, ուսումնասիրվել են դրանց կազմակերպչական և գործառույթային հնարավորությունները, հարակից արտադրությունների հետ գործընկերային կապերը, ինչպես նաև արտահանման խթանման ու զարգացման միջազգային փորձը: Արտահանմանն ուղղված քաղաքականությունն ի հաշիվ երկրի արտահանող և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման հետապնդում է տնտեսության արդիականացման և տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովման նոր, ավելի արդյունավետ մեխանիզմների ձևավորման նպատակ: Այդպիսի նպատակի իրագործման համար չափազանց մեծ է վերամշակող կազմակերպությունների դերը, որոնց զարգացման և արտաքին շուկաներ դուրս գալու համար անհրաժեշտ է ոչ միայն երկարաժամկետ համալիր ծրագրեր, այլ նաև պետական համակողմանի աջակցություն: Միաժամանակ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ներկայումս յուրաքանչյուր տնտեսական համակարգ կարող է լինել արդյունավետ, երբ այն կառուցված է գիտելիքների, ինովացիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և առաջընթացը պայմանավորող այլ գործոնների լայն օգտագործմամբ կիրառվող

մոտեցումների վրա: Այսօր միայն այդ պայմաններում է հնարավոր զարգացնել երկրի արտահանման ներուժը և ձևավորել արտահանման այնպիսի ռազմավարություն, որպեսզի հնարավոր լինի ոչ միայն մտնել արտաքին շուկաներ, այլև դրանցում գրավել մրցակցային ցանկալի դիրք: Ժամանակակից աշխարհում, հատկապես փոքր շուկա ունեցող երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, զարգացման հեռանկարային ճանապարհներից մեկը միջազգային ինտեգրումն է, քանի որ բնական ռեսուրսներով հարուստ լինելու հանգամանքը դեռևս չի կարող հանդիսանալ երկրի տնտեսական զարգացման և բարձր մրցունակության երաշխիք:

Հայաստանի հանրապետությունում վերամշակող ձեռնարկությունների արտահանման ներուժի զարգացումը և այդ նպատակով արդյունավետ ռազմավարության մշակումը, մեր կարծիքով, պետք է կազմակերպել այդ ուղղությամբ իրականացվող պետական միասնական քաղաքականության շրջանակներում: Ակնհայտ է, որ այդ ձեռնարկությունները՝ կախված տնտեսության կոնկրետ ոլորտի կամ արտադրության առանձնահատկություններից, պետք է ունենան արտահանման ռազմավարությունների որոշակի տարբերություն: Արտաքին շուկաներ դուրս գալու և դրանցում մրցակցային նպաստավոր դիրք գրավելու այդ տարբերություններով պայմանավորված տարաձայնությունների հաղթահարումն, անշուշտ, հնարավոր է միայն պետության կողմից արտահանման համակարգված քաղաքականության իրականացման դեպքում:

Արտահանման առումով Հայաստանում ակնհայտորեն առանձնանում են հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկությունները: Հանրապետության արտահանման կառուցվածքում հանքահումքային արտադրանքից բացի նշանակալի տեղ են գրավում ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, թանկարժեք քարերը և մետաղները, ինչպես նաև հիմնականում գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ արտադրված պատրաստի սննդի արտադրանքը: Ներկայումս այլ ոլորտներում արտադրված ապրանքատեսակների արտահանման ծավալը կազմում է ընդհանուր արտահանման ծավալի գրեթե 11 տոկոսը (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հայաստանի արտահանման կառուցվածքը 2008-2012թթ (%)[2]

[2] Աղբյուրը ԱՎԾ http://www.armstat.am/

Արտահանման կառուցվածքում բավականին մեծ է մետաղական հումքի տեսակարար կշիռը: Դա հիմնականում ոսկու, պղնձի և մոլիբդենի խտանյութ է, որն, ըստ էության, չմշակված կամ մշակման բարդ տեխնոլոգիական փուլ չանցած հումք է, իսկ երբեմն նաև մետաղական թափոներ են: Հանրապետության արտահանման կառուցվածքում ներկայումս ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը գրավում են երկրորդ տեղը, իսկ հաջորդ երկու տեղերը տարիներ շարունակ զբաղեցնում են թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղված ձեռնարկությունների արտադրանքը:

ՀՀ արտաքին առևտրի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիների ընթացքում գրանցվել է արտահանման և ներմուծման հարաբերակցության հանրապետության համար խիստ բացասական մակարդակ (տես գծապատկեր 2): Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական վարվող քաղաքականությամբ տնտեսությունում չեն իրականացվել որակական այնպիսի տեղաշարժեր, որպեսզի հնարավորության սահմաններում ներմուծումը փոխարինվեր հայրենական արտադրանքով, իսկ արտահանումը կողմնորոշվեր դեպի վերջնական ապրանքների արտադրություն: Այդ մասին է վկայում նաև այն, որ մինչև օրս հանրապետության հանքարդյունաբերությունում դեռևս լուծված չեն հումքի վերամշակման գործընթացի կատարելագործման, ինչպես նաև կիսաֆաբրիկատների և պատրաստի արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացման հարցերը: Անցած ժամանակաշրջանում թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտադրության բնագավառում ևս չեն նկատվել արդիականացման և արտաքին շուկաներում իրացվող արտադրանքի մրցունակության բարձրացման միտումներ: Ինչ վերաբերում է թանկարժեք քարերի և մետաղների արտադրությանն, ապա այս բնագավառում ներկրման ծախսերն էականորեն չեն տարբերվում արտահանումից ստացված օգուտներից:



Գծապատկեր 2. ՀՀ արտաքին առևտուրը 2004-2013թթ[3], մլն ԱՄՆ դոլար

Այսինքն ոլորտում ստեղծված ավելացված արժեքը ոչ այսօր, ոչ էլ վաղը, մեր կարծիքով, չի կարող դառնալ հանրապետության տնտեսական համակարգի արդյունավետության բարձրացման գործոն:

[3] Աղբյուրը ԱՎԾ http://www.armstat.am/

ՀՀ արտահանման կառուցվածքում գյուղատնտեսական ապրանքների արտահանումն անցած ամբողջ ժամանակահատվածում գրավել է կայուն տեղ և տնտեսության թերևս այն ոլորտներից է, որն ունենալով արտահանման բավականաչափ ներուժ կարող է դառնալ հանրապետությունում արտահանման զարգացման կարևորագույն գործոն: Դրա վկայությունը պետք է համարել նաև այն, որ գյուղատնտեսական ապրանքների արտահանումն ունենալով շարունակական աճ, 2013 թվականին կազմել է հանրապետության արտահանման ընդհանուր ծավալի 27.7 տոկոսը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղատնտեսական ապրանքների արտահանումը 2008-2013 թթ [4]

(մլն ԱՄՆ դոլար)

	2008	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*
ՀՀ արտահանումը	1055,0	684,0	1011,0	1320,0	1428,0	1479,0
Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը	198,3	133,4	172,3	238,9	321,3	410,7
Գյուղատնտեսական ապրանքների արտահանման տեսակարար կշիռը (%)	18.8	19.5	17.0	18.1	22.5	27.7

Հայկական գյուղատնտեսական արտադրանքն ըստ արտահանվող երկրների ներկայումս ունի բավականին փոքր աշխարհագրություն: Այն հիմնականում սահմանափակվում է հետխորհրդային մի քանի երկրներով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Բելոռուս: Ընդ որում, արտահանվող գյուղատնտեսական արտադրանքի մոտ 62 տոկոսը բաժին է ընկնում Ռուսաստանին (տես աղյուսակ 2): Վրաստանի շուկան ընդհանուր առմամբ, բաց է հայկական գյուղմթերքների համար, քանի որ հանրապետությունից արտահանումն իրականացնում է ինչպես հայկական արտահանողների, այնպես էլ վրացական սուբյեկտների կողմից: Հայաստանի հետ անմիջական հարևան լինելու հանգամանքը էականորեն փոքրացնում է տրանսպորտային ծախսերը, ինչով էլ պայմանավորված է հայկական գյուղմթերքների մշտապես ներկայացված լինելը վրացական շուկաներում:

[4] Աղբյուրը ԱՎԾ http://www.armstat.am/

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանումն ըստ երկրների 2008-2013[5]

(մլն ԱՄՆ դոլլար)

Երկրների անվանումը	2008	2009	2010	2011	2012	2013
Ռուսաստան	144,54	77,4	109,9	149,7	218,3	257,4
Վրաստան	18,71	13,8	11,6	14,7	19,1	30.4
Իրաք	0,0	0,15	0,4	4,1	15,7	47,5
Ուկրաինա	17,5	7,6	8,9	9,6	12,5	12,8
Թուրքմենիա	0,48	0,6	2,5	2,0	9,0	8.6
Կիպրոս	0,12	0,1	0,0	1,6	8,1	-
Բելառուս	1,75	3,9	3,7	4,8	5,1	7.8
ԱՄՆ	6,55	6,7	6,2	6,5	5,1	4.7
ԱՄԷ	0,33	0,3	0,21	0,4	3,2	3.8
Իրան	0,84	3,8	0,54	0,4	2,9	12.8
Այլ երկրներ	7,53	19,25	28,2	45,2	22,05	24.9
Ընդամենը	**198.35**	**133.60**	**172.15**	**239.00**	**321.05**	**410.7**

Այլ շուկաներում հայկական գյուղատնտեսական արտադրանքն առայժմ չունի էական դիրք, պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի մի շարք պատճառներով: Մասնավորապես, Եվրամիության հետ սակագնային ազատականացումը և դրա արդյունքում վերամշակող կազմակերպությունների և գյուղատնտեսական արտադրանքի հնարավոր գնային մրցունակության որոշակի աճը Հայաստանի համար դեռևս չեն կարող դառնալ արտահանման ընդլայնման երաշխիք, քանի որ ԵՄ շուկայի պահանջներին բավարարող հայկական արտադրության ծավալը չափազանց փոքր է կամ սահմանափակված է Եվրոպական ոչ սակագնային այլ խոչընդոտներով:

Հարկ է նշել, որ արտահանման քաղաքականությունն, ըստ էության, կարող է ունենալ նաև զգալի դեր Հայաստանի Հանրապետության տարածքային անհամաչափությունների կրճատման և տնտեսական աճի որակական կառուցվածքի բարելավման գործում: Մասնավորապես, հանքարդյունաբերության զարգացմամբ

[5] Աղբյուրը ԱՎԾ http://www.armstat.am/

առանձնացող մարզերում անհրաժեշտ է համակողմանիորեն խթանել ներդրումների ներգրավման քաղաքականությունը: Խնդրի արդյունավետ լուծումը պահանջում է իրատեսորեն գնահատել այդ մարզերի ներդրումային հնարավորությունները և տնտեսական կարողությունները: Այդ առումով, հատկանշական է Սյունիքի մարզը, որը բացի հանքարդյունաբերության զարգացումից ունի լայն հնարավորություններ զարգացնելու գյուղատնտեսության հետ կապված այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են սննդի արդյունաբերությունը, անասնապահությունը, ինչպես նաև զբոսաշրջությունը: Միաժամանակ, համալիր լուծում են պահանջում հիշյալ ոլորտների ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը, հատկապես հանրապետության այլ բնակավայրերի հետ մարզի օդային կապի վերականգնումը:

Արտահանման խթանման և համայնքների համաչափ զարգացման գործում փոքր չէ նաև միջազգային կազմակերպությունների դերը, որոնց օգնությամբ լուծում են ստացել մարզային որոշ խնդիրներ: Դրանց շարքում առանձնանում են հատկապես շրջակա միջավայրի պահպանության ծրագրերը: Մասնավորապես, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի գլոբալ բնապահպանական հիմնադրամի համաֆինանսավորմամբ և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, Սյունիքի կառույցի օժանդակությամբ տարածաշրջանում իրականացվել են անտառապատման և բնապահպանական տարբեր աշխատանքներ:

Վերամշակող ձեռնարկությունների զարգացման համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև երկրի և առանձին մարզերի տնտեսության կառուցվածքի և զարգացման առաջնահերթություններին: Հաշվի առնելով հանքահումքային ռեսուրսների սահմանափակ լինելու հանգամանքը հրատապ է դառնում ոչ հանքարդյունաբերական ճյուղերի և ձեռնարկությունների ստեղծման, տնտեսության դիվերսիֆիկացման ճանապարհով նոր աշխատատեղերի և լրացուցիչ եկամուտների ապահովումը: Միաժամանակ, տնտեսության զարգացման ցանկացած ծրագիր պետք է համակողմանի գնահատի երկրի և նրա առանձին տարածքների մրցակցային առավելությունները, մարդկային, հանքահումքային, արտադրական ռեսուրսները և այլն, ինչը թույլ կտա էականորեն բարձրացնել Հայաստանի վարչատարածքային միավորների տնտեսական ներուժի զարգացման արդյունավետությունը: Արտահանման խթանման գործում էական է նաև պետական հովանավորչության դերը: Արտաքին շուկաներ մուտք գործող ընկերություններն իրենց ճանապարհին հաճախ հանդիպում են խոչընդոտների: Այդ իսկ պատճառով մի շարք զարգացած և զարգացող երկրներ մշակել և իրականացնում են արտահանման խրախուսման ծրագրեր, որոնք հիմնականում իրականացնում են համապատասխան լիազորություններով օժտված առանձնացված մարմնի միջոցով: Երկրների մեծ մասում գործում են նաև արտահանման տեղեկատվական կենտրոններ, որոնց վրա էլ հիմնականում դրվում է արտահանման խրախուսման ծրագրերի իրագործման առաքելությունը: Դրանք աջակցում են արտահանում իրականացնող ձեռնարկություններին, տրամադրում են դրամաշնորհներ, կազմակերպում են ցուցահանդեսներ և տոնավաճառներ, ապահովում են ընկերությունների մասնակցությունը այդ միջոցառումներին և այլն:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետությունում վերամշակող կազմակերպությունների արտահանման ռազմավարության մշակման և իրագործման կատարելագործման ուղիները», գլխում նախանշվել են վերամշակող

կազմակերպությունների արտահանման ռազմավարության մշակման մեթոդաբանության կատարելագործման ուղիները, ուրվագծվել են արտահանման գործընթացում վերամշակող կազմակերպություններում հնարավոր ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները, առաջարկվել է արտահանման խթանման մասնագիտացված կառույցի ներդրման գործարար մոդել:

Ակնհայտ է, որ արտահանման ռազմավարության վրա էական ազդեցություն կարող է ունենալ արտաքին միջավայրը: Վերջինիս ազդեցության հիմնական գործոնները կարող են կրել քաղաքական, տնտեսական, իրավական և այլ բնույթ: Դրանք, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին կարող են դառնալ արտահանմանը խթանող կամ արգելակող գործոններ: Նշենք նաև, որ մի շարք երկրների դեպքում, ինչպիսին Հայաստանն է, արտահանման առումով կարևոր նշանակություն կարող են ունենալ երկրի աշխարհագրական դիրքը, արժութային ռիսկերը, մշակութային առանձնահատկությունները, սփյուռքի առկայությունը, ինչպես նաև արտահանման համար նախընտրելի համարվող երկրում արտաքին առևտրի բնագավառում ձևավորված ավանդույթներն ու իրականացվող քաղաքականությունը: Հանրապետությունում արտահանման գործընթացի կազմակերպումը մեթոդաբանական ճիշտ հիմքերի վրա դնելու նպատակով աշխատանքում քանակական վերլուծության մեթոդների օգտագործմամբ առաջարկվել է արտահանման համար առավել նախընտրելի երկրների աստիճանակարգման մատրիցա, որտեղ ներկայացված յուրաքանչյուր երկրի կտրվածքով ըստ նշված ազդեցության գործոնների իրականացվում է գնահատում և համեմատական վերլուծություն: Ընդ որում, մատրիցա ներառվող գործոնների առումով որևէ սահմանափակում չկա: Ավելին, որքան շատ լինեն մատրիցա ընդգրկված գործոնները, այնքան կմեծանա արտահանման երկրների ընտրության արդյունավետությունը:

Աշխատանքում իրականացված է արտահանման վրա ազդող արտաքին միջավայրի գործոնների համակողմանի վերլուծություն: Մասնավորապես, քաղաքական զարգացումների տեսանկյունից դիտարկվել է գործոնների երկու հիմնական խումբ՝ քաղաքական միջավայրի կայունությունը և քաղաքական ռիսկի մակարդակը: Քաղաքական գործոններն, ըստ էության, բազմազան են և դրանց ընդգրկումը մատրիցա գործնականում ներկայանում է ոչ նպատակահարմար: Այդ առումով, աշխատանքում առաջարկված է քաղաքական ազդեցության գործոնների այնպիսի դասակարգում, որ թույլ է տալիս դրանց ինտեգրալ ազդեցության հաշվառում և գնահատում:

Արտահանման վրա արտաքին միջավայրի ազդեցության գործոններից, առաջին հերթին, անհրաժեշտ է առանձնացնել այնպիսի ցուցանիշներ, որոնք բնութագրում են տնտեսական իրավիճակը տվյալ երկրում և թույլ են տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով գնահատել որևէ այլ երկրից ապրանքներ ներմուծելու նրա հակվածությունը: Այդ առումով, հիմնական ցուցանիշներ կարող են լինել տնտեսության կառուցվածքը, տնտեսական աճի կամ գնաճի տեմպերը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը բնութագրող ցուցանիշները: Նշենք, որ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական այլ գործոններ աստիճանակարգման մատրիցա ներառելու տեսանկյունից որևէ սահմանափակում չկա, իսկ արտահանման հնարավոր երկրների դիտարկման առումով,

դրանք կարելի է բաժանել պայմանական խմբերի՝ զարգացած երկրներ, զարգացող երկրներ, հումք արտահանող երկրներ և այլն:

Արտահանող կազմակերպությունների գործունեության վրա էական ազդեցություն կարող է ունենալ ներմուծող երկրի իրավական համակարգը: Արտահանող կազմակերպությունը պետք է հստակ պատկերացում ունենա արտահանվող երկրի իրավական համակարգի, ինչպես նաև գործող իրավահարաբերությունների մասին: Այդ առումով, հիմնականում լինում են սովորական, քաղաքացիական և թեոկրատական իրավունքի համակարգեր: Ընդ որում, եթե արտահանող երկրի իրավական համակարգը համապատասխանում է ներմուծող երկրի իրավական համակարգին, գործարքն, որպես կանոն, գնահատվում է բարձր:

Շատ հաճախ կազմակերպություններն անտեսում են աշխարհագրական դիրքի հետ կապված գործոնների կարևորությունը: Այդուհանդերձ, պետք է հաշվի առնել, որ տրանսպորտային ծախսերը ուղղակիորեն կախված են հենց այդ գործոններից: Այս առումով աստիճանակարգման մատրիցայում բարձր են գնահատվում այն երկրները, որոնք ավելի մոտ են գտնվում արտահանող երկրին:

Արժութային ռիսկի գնահատման ժամանակ հաշվի է առնվում երկու կարևոր հանգամանք՝ ազգային արժույթի փոխարկելիությունը և կայունությունը: Կախված դրանց մակարդակից, մատրիցայում արտահանվող երկրներին տրվում է համապատասխան գնահատական:

Մշակութային միջավայրի գնահատումն ինքնին բարդ գործընթաց է, քանի որ դրանում ներառվում են կրթական մակարդակի, կրոնի, մշակույթի, բարոյական նորմերի, սովորույթների, ինչպես նաև ազգային նկարագրի և այլ նմանատիպ բնութագրիչները: Եթե արտահանման շուկաների որոնումը կատարվում է երկրների նույն խմբում, ապա մատրիցայում գրանցվում է բարձր բալ, հակառակ դեպքում այն լինում է ավելի ցածր:

Առևտրային քաղաքականության դեպքում գնահատվում է արտահանման հնարավոր երկրում առկա առևտրային սահմանափակումների խստությունը: Կախված նրա բաց դռների քաղաքականություն վարելու աստիճանից աստիճանակարգման մատրիցայում գրանցվում է գնահատման համապատասխան բալ:

Արտահանման վրա ազդող ներկայացված գործոնների ներառմամբ մշակվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղված կազմակերպությունների արտահանման համար նախատեսված թողարկումը հնարավոր այլ երկրներում իրացնելու աստիճանակարգման ցանցային մատրիցա (տես աղյուսակ 3): Վերջինիս կառուցումն, անշուշտ, կրում է փորձնական բնույթ և պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղմթերքների վերամշակումն ու արտահանումը ներկայումս գտնվում է համեմատաբար շատ ավելի կանոնակարգված վիճակում, քան հանրապետության արտահանման կառուցվածքում գերակա դիրք ունեցող հանքարդյունաբերության արտադրանքը: Ցանցային մատրիցայի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի համար տնտեսապես ավելի շահավետ է արտահանել նախկին Միության երկրներ, քանի որ դրանցում դեռևս նկատվում է մշակութային արժեքների նմանություն և քաղաքական դաշտի ընդհանրություն,

ինչպես նաև տրանսպորտային ավելի փոքր ծախսեր և համեմատաբար բարենպաստ աշխարհաքաղաքական դիրք:

Աղյուսակ 3.

Արտահանվող երկրների ցանցային մատրիցա

Երկրների անվանումը	Զբաղեցրած տեղը 10 առաջնահերթ երկրների ցանկում	Տնտեսական	Քաղաքական	Իրավական	Մշակութային	Արժութային ռիսկ	Աշխարհագրական դիրք	Առևտրային քաղաքա-կանություն	Ընդամենը
Ռուսաստան	1	2	4	5	4	4	5	4	**28**
Վրաստան	2	2	4	5	5	4	5	3	**28**
Բելառուս	3	2	4	5	4	4	5	3	**27**
ԱՄՆ	4	5	3	3	2	5	2	5	**25**
Ուկրաինա	5	2	1	5	4	4	5	3	**24**
Թուրքմենիա	6	2	1	5	4	4	4	2	**22**
Կիպրոս	7	2	4	5	3	2	4	2	**22**
Իրան	8	3	1	2	1	4	5	4	**20**
ԱՄԷ	9	3	1	2	1	3	4	3	**17**
Իրաք	10	3	1	2	1	3	3	2	**15**

Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ խնդիր է դարձել հատկապես գյուղմթերքների վերամշակմամբ զբաղված ընկերությունների գործունեության ընթացքում ծագող ռիսկերի զսպումն ու արդյունավետ կառավարումը: Պայմանավորված գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությամբ, բերքատվության պարբերականությամբ, բնական պայմաններով, կապիտալ ներդրումների հատուցման ցածր մակարդակով ոլորտը անընդհատ առնչվում է մեծ ռիսկերի, որոնց կառավարումն ի տարբերություն տնտեսության այլ ճյուղերի չափազանց դժվար է և, անշուշտ, ենթադրում է պետական համակողմանի աջակցություն:

Աշխարհի առաջավոր երկրներում արտահանման քաղաքականությունը դիտվում է որպես տնտեսական զարգացման ռազմավարական ուղղություն և դրան ակտիվ աջակցություն է ցույց տրվում պետության կողմից: Հիմնվելով այդ ասպարեզում առկա

միջազգային փորձի վրա, Հայաստանի համար հատկապես կարևոր է դառնում հատուկ մասնագիտացված կառույցի ստեղծման անհրաժեշտությունը: Ըստ էության, արտահանման խթանման մասնագիտացված կառույցը «պետություն-մասնավոր հատված» համագործակցությունը կազմակերպող կարևորագույն օղակ է, որի հիմնական գործառույթները պետք է լինեն արտահանման կողմնորոշում ունեցող վերամշակող կազմակերպություններում թողարկվող արտադրանքի ծավալի մեծացման խթանումը և ներկրվող ապրանքները տեղական արտադրությամբ փոխարինման գործարար ծրագրերի մշակումը (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ արտահանման մասնագիտացված կառույցի ընդհանուր սխեման

Մասնագիտացված կառույցի կարևորագույն գործառույթներն, անշուշտ, պետք է լինեն մատչելի վարկավորումը, շուկաների մշտադիտարկումը և ներդրումային իրավիճակի

գնահատումը: Կառույցի այլ ֆունկցիաները և դրանց հրատապությունը, բնականաբար, կորոշվի կարևորագույն գործառույթների իրականացման ընթացքում: Հիմնական գործընկերները գծապատկերում ներկայացված կազմակերպություններն են: Սակայն, կախված արտահանման գործընթացի առանձնահատկությունից, մասնագիտացված կառույցը կարող է ընդլայնել գործընկերների շրջանակը: Արտահանման գործընթացին առնչվող արտաքին և ներքին կապերի կառավարումը կառույցի հիմնական գործառույթներից մեկն է, որն ուղղված պետք է լինի վերամշակող կազմակերպությունների, դրանց օտարերկրյա և հայրենական գործընկերների միջև կայուն հարաբերությունների հաստատմանը:

Արտահանման խթանման մասնագիտացված կառույցն իր հիմնական գործառույթներից բացի պետք է նպաստի վերամշակող ընկերություններում արտադրատնտեսական հարաբերությունների կատարելագործմանը, ինչպես նաև դրանց նպատակամետ գործունեությունն ապահովող այլ ոլորտների համալիր զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Կառույցի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը պետք է դառնա արտոնյալ պայմաններով արտահանման վարկավորումը: Ներկայումս ֆինանսական ռեսուրսների չափազանց թանկ լինելու պայմաններում մասնագիտացված կառույցի աջակցությունն արտահանմանը կողմնորոշված վերամշակող կազմակերպություններին պետք է իրականացվի ոչ միայն բյուջետային արտոնյալ վարկերի, այլ նաև դրանց զարգացման ու արդիականացման համար պետական երաշխիքների տրամադրմամբ:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են եզրահանգումները.

1. Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր նպատակներից է արտահանման հնարավոր առավելագույն մակարդակի ապահովումը: Լինելով համախառն ներքին արդյունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն արտահանումը կարող է մեծապես ազդել դրա կառուցվածքի քանակական և որակական պարամետրերի վրա: Այդ առումով, անշուշտ, բացառություն չի կարող կազմել նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ արտահանման և ներմուծման ներկայիս բացասական մեծ տարբերությունը ստեղծում է բազմաթիվ դժվար լուծելի խնդիրներ և, բնականաբար, հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի զսպման ու առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման: Միևնույն ժամանակ, Հայաստանը տիրապետելով արտահանման բավականաչափ նպաստավոր պայմանների, պայմանավորված պետական արտահանման միակողմանի քաղաքականությամբ, շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակաշրջանում չի հասել արտահանման ներուժի զարգացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման հանրապետության համար չափազանց կարևոր և իրատեսական նպատակներին:
2. Ներկայումս Հայաստանի արտահանման հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է: Հանրապետության արտահանման կառուցվածքում ունենալով ամենամեծ տեսակարար կշիռը, այդուհանդերձ, ոլորտի հանքավայրերը շահագործվում են ոչ ժամանակակից տեխնոլոգիաներով և ցանկալի արդյունավետությամբ, թողարկվում է միայն պղնձի և մոլիբդենի խտանյութ, որը արտաքին շուկաներում իրացվում է չափազանց ցածր գներով:

Ավելին, բացի նշվածներից հանքավայրերում կան հազվադեպ հանդիպող թանկարժեք մետաղներ, որոնցից մի մասն ընդհանրապես չի կորզվում և կուտակվելով պոչամբարներում, թունավորում է շրջակա միջավայրը և ստեղծում նոր էկոլոգիական խնդիրներ: Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման և ոլորտի արտահանման ներուժի ընդլայնման հիմնական ուղի պետք է դառնա ոչ թե խտանյութի ստացումն, այլ հնարավոր վերջնական արտադրանք ստեղծող արտադրությունների զարգացման ճանապարհով պատրաստի արդյունքի թողարկումն ու իրացումը:

3. Հայաստանի արտահանման ներուժի զարգացման կարևորագույն ուղղություններից կարող է դառնալ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների համալիր զարգացումը, որոնց գործունեության սահմանների հնարավոր առավելագույն ընդլայնումը թույլ կտա ոչ միայն էականորեն մեծացնել արտահանման ծավալները, այլև նպաստել հանրապետության տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը և ՀՆԱ կառուցվածքի բարելավմանը: Սակայն, այդ նպատակին հասնելու համար վերամշակող յուրաքանչյուր ձեռնարկություն պետք է ունենա իր գործունեությանը յուրահատուկ արտահանման ռազմավարական համալիր ծրագիր, որը երկարաժամկետ հեռանկարի կտրվածքով կենթադրի սեփական արտադրության շարունակական արդիականացում և միջազգային շուկաների պահանջներին համապատասխան արտադրանքի թողարկում: Ակնահայտ է, որ հատկապես Հայաստանի պայմաններում այդպիսի ծրագրերի իրագործումն առանց պետական համակարգված աջակցության գրեթե բացառվում է: Այդ աջակցությունն, առաջին հերթին, պետք է կայանա վարկավորման արտոնյալ ռեժիմների սահմանման, ապահովագրական ծառայությունների ձևավորման, նորամուծությունների խթանման, արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման, իրացման պայմանների կատարելագործման, տրանսպորտային ուղիների արդիականացման, արտաքին շուկաներ ներթափանցելու գործընթացներին նպաստման, որակի միջազգային ստանդարտների ներդրման և այլնի մեջ:

4. Գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի պետական աջակցության հիմնական գործառույթները պետք է դառնան.
   - արտաքին առևտրի ռազմավարության հստակեցումը և արտահանման շուկաներում կոնյուկտուրային փոփոխությունների մասին ձեռնարկություններին ինֆորմացիայի տրամադրումը,
   - գործարար տեղեկատվության պատրաստումն ու տարածումը, գիտագործնական և մարքեթինգային ուսումնասիրությունների ընդլայնումը,
   - մասնագետների պատրաստմանն ու նոր տեխնոլոգիաների ներդրմանն օժանդակությունը,
   - շուկայի պահանջներին արագ արձագանքող արտադրությունների ընդլայնման խթանումը,
   - վերամշակող ընկերությունների, հատկապես՝ գինիների, մուրաբաների, ջեմերի, կոնֆիտյուրների, օշարակների, չրերի, համեմունքների, ազգային աղանդերի (ալանի, սուջուխ, դոշաբ, ըմպելիքների և թեյերի խոտաբույսեր, դեղաբույսերի և այլն) փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանումը,

- ներքին և արտաքին շուկաներում վերամշակումից ստացված արտադրատեսակների մրցակցությունը բարձրացնելու նպատակով փոխշահավետ առևտրային կապերի ընդլայնումը, ցուցահանդեսների կազմակերպումը, դրանց մասնակցությանը, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորման համար տնտեսվարող սուբյեկտների համար տեղեկատվության տրամադրման մատչելիության ապահովումը:

5. Հանդիսանալով Հայաստանի տնտեսության արտահանման կարևոր ուղղություններից մեկը, սննդամթերքի արտադրությունը պետք է ունենա մեծ դեր հանրապետության գյուղատնտեսության զարգացման խնդիրների լուծման գործում: Մասնավորապես, կոնյակագործության բնագավառում ներկայումս մթերվում է խաղողի բերքի շուրջ 60 տոկոսը և աշխատում է ավելի քան տաս հազար մարդ: Այդ իսկ պատճառով, ոլորտի զարգացման հիմնական խնդիրը պետք է լինի արտադրանքի բարձր որակի ապահովումը և հայկական կոնյակի բրենդի պահպանումը: Այլ կարևոր և համալիր լուծում պահանջող խնդիրներից են հումքային բազայի կատարելագործումն ու ամրապնդումը, սերտիֆիկացման աշխարհագրության ընդլայնումը, տրանսպորտային հաղորդակցության ուղիների արդիականացումը, արտաքին շուկաներում մարքեթինգի ապահովումը և այլն:
6. Արտաքին տնտեսական կապերի առումով Ռուսաստանի Դաշնությունը եղել և մնում է Հայաստանի գլխավոր քաղաքական և տնտեսական գործընկերը: Ռուսաստանի շուկան խոշորագույներից է, որի հետ ներկայումս ձևավորված են հարաբերականորեն կարգավորված տրանսպորտային հաղորդակցության կապեր: Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պարագայում դրանք, անշուշտ, ավելի կամրապնդվեն, ինչն, ըստ էության, կդառնա ինչպես տնտեսական կապերի առավել խորացման, այնպես էլ արտահանման ծավալների ավելացման կարևորագույն պայման: Հանքարդյունաբերության արտադրանքը խտանյութի տեսքով, ինչպես նաև թանկարժեք քարերը հիմնականում արտահանվում են Եվրոպական երկրներ, իսկ գյուղատնտեսական արտադրանքի իրացման աշխարհագրությունը սահմանափակվում է հետխորհրդային մի քանի երկրներով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա և Բելոռուս: Հարկ է սակայն նշել, որ արտահանվող հայկական գյուղատնտեսական արտադրանքը փոքր աշխարհագրությունից բացի, ունի նաև դիվերսիֆիկացիայի չափազանց ցածր մակարդակ, ինչն, անշուշտ, զգալիորեն մեծացնում է հանրապետության կախվածությունն ինչպես արտաքին շուկաներից, այնպես էլ դրանցում իրացվող արտադրատեսակների բազմազան չլինելու հանգամանքից: Նշված բացասական երևույթները բացառելու համար անհրաժեշտ է մեծ պահանջարկ վայելող մշակաբույսերի, մրգերի, պտուղների և գյուղամթերքի վերամշակումից ստացվող այլ արտադրանքի տեսականու ընդլայնում և արտադրական նոր տեխնոլոգիաների ներդրում:
7. Արտաքին տնտեսական կապերի խորացումն, արտահանման ծավալների մեծացումն, արտաքին շուկաների աշխարհագրության ընդլայնումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման կառուցվածքի բարելավումը և այլն կապված են մեծ ռիսկերի հետ, որոնց արդյունավետ կառավարումը պահանջում է արտահանման գործընթացի բոլոր մասնակիցների շահերի պաշտպանություն և մրցակցային հավասար պայմանների ապահովում: Ռիսկերի կառավարման առավել բարդ խնդիրներ են ծագում հատկապես գյուղատնտեսությունում և այդ

ոլորտի հումքը վերամշակող կազմակերպություններում: Այդպիսի խնդիրների լուծման համար անհրաժեշտ է նախապես գնահատել և համադրել «արտադրող-վերամշակող- մատակարարող-սպառող» շղթայի մասնակիցների հնարավոր ռիսկերը, որոնց վերացման կամ մեղմման համար անհրաժեշտ է ստեղծել ապահովագրական համապատասխան ծառայություններ:

8. Հայաստանի պայմաններում գյուղատնտեսության ասպարեզում ռիսկերի արդյունավետ կառավարումը պահանջում է.
   - ապահովագրական համակարգի ներդրում,
   - հակակարկտային համակարգի վերականգնման ծրագրի իրագործում,
   - ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների օգտագործում,
   - երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի սպառման հատուկ ռեժիմների սահմանում,
   - հակահեղեղային և սողանքների կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
   - գյուղատնտեսական բերքի կանխատեսման ու ծրագրավորման համակարգի ձևավորում:
9. Արտահանման գործընթացն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր ռիսկերից ենթադրվող հետևանքները արագորեն վերացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է արտահանման շուկայի ճիշտ ընտրություն: Այս հանգամանքը հատկապես Հայաստանի վերամշակող կազմակերպությունների համար ունի սկզբունքային նշանակություն, քանի որ հանրապետությունում արտադրվող արտադրանքն իր որակական հատկություններով դեռևս չի կարող լիարժեքորեն բավարարել միջազգային շուկաներում ձևավորված պահանջները: Այդ առումով, իրարամերժ վիճակներում չհայտնվելու համար տնտեսավարող սուբյեկտի կողմից արտահանման շուկայի ճիշտ ընտրությունը դառնում է հետագա արդյունավետ գործունեություն իրականացնելու կարևոր պայման: Միևնույն ժամանակ, արտահանման շուկաների ընտրության անհրաժեշտ հիմնավորվածություն ապահովելու համար անհրաժեշտ է լայնորեն օգտվել քանակական վերլուծության ժամանակակից ապարատից, քանի որ միջազգային շուկաներում գործող պայմանները և կոնյուկտուրային արագ փոփոխությունները կախված են բազմաթիվ գործոններից, որոնց ազդեցության սահմանները հնարավոր է որոշել միայն դրանց պարամետրերի քանակական համադրության արդյունքում:
10. Արտահանման շուկաների ընտրության հիմնավորվածությունն, իր հերթին, մեծապես կախված է դեպի այդ շուկաներ տանող տրանսպորտային հաղորդակցության ուղիների վիճակից: Այս տեսանկյունից, Հայաստանն առնչվում է որոշակի դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է այդ ուղիների կատարելագործում: Հանրապետությունում ներկայումս արտահանման առավել նպատակահարմար միջոց է դարձել ավտոմոբիլային տրանսպորտը: Վերջինիս արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է միջպետական նշանակության ավտոճանապարհային ցանցի ընդլայնում և պահպանում: Հանրապետությունում արդեն իսկ սկսված է «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շինարարության խոշորամասշտաբ ծրագրի իրականացման աշխատանքները: Սակայն, մեր կարծիքով, այդ ծրագրի իրականացմանը զուգահեռ պետք է ստեղծել նպատակային հիմնադրամ, որը բացառապես կզբաղվի

ավտոճանապարհների շահագործմամբ և պահպանմամբ: Տրամաբանական է ենթադրել, որ այդպիսի հիմնադրամի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի միասնական նպատակային հարկի սահմանումը, սակայն սկզբնական փուլերում որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր կարելի է համարել ավտոտրանսպորտային միջոցների շահագործման և բեռնափոխադրումների դիմաց գանձվող գումարները:

11. ՀՀ արտահանման ներուժի զարգացման և դրա հետ կապված գործընթացների համակարգման նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան լիազորություններով օժտված հատուկ մասնագիտացված կառույց, որի հիմնական գործառույթները պետք է լինեն հանրապետության արտահանման ընդհանուր ռազմավարության մշակումը, արտահանման կողմնորոշում ունեցող վերամշակող կազմակերպությունների գործունեության խթանումը, ներկրվող ապրանքատեսակների արտադրությունը հնարավորինս տեղական արտադրությամբ փոխարինման գործարար նախագծերի պատրաստումը, ձեռնարկություններում դրանց ներդրման և իրագործման գործընթացներին աջակցումը, արտահանող կազմակերպություններում արտադրատնտեսական հարաբերությունների կատարելագործումը, ինչպես նաև վերջիններիս գործունեությանը նպաստող այլ արտադրությունների զարգացման ուղղությունների նախանշումը:Սկզբնական շրջանում արտահանման խթանման մասնագիտացված կառույցն իր գործունեությունն, առաջին հերթին, պետք է ծավալի հանքարդյունաբերության և գյուղատնտեսության հումքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների արտահանման ներուժի զարգացման և ընդլայնման, հատկապես մետաղամալուխային արտադրանքի և ճշգրիտ սարքերի թողարկման, օրգանական հումքի մշակման, հյութերի, խտանյութերի և պահածոյացված սննդամթերքի պատրաստման, ալկոհոլային խմիչքների նոր տեսակների ստացման և դրանց որակական հատկանիշների բարելավման, ինչպես նաև չոր և շաքարածո մրգերի արտադրության կազմակերպման ուղղությամբ:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Թադևոսյան Հ.Ա., «Արտահանման ռազմավարության մշակման արդի մեթոդաբանական հիմնախնդիրները՝ արտաքին միջավայրի գործոնների համատեքստում», ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2, 2012, էջ 191-196:
2. Թադևոսյան Հ.Ա., «Ռիսկերի կառավարման և պետական կարգավորման լծակները գյուղատնտեսության զարգացման ոլորտում», ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, Հանրապետական գիտաժողովի նյութե, գիրք 1, 2013 էջ՝191-198:
3. Թադևոսյան Հ.Ա., «Արտահանմանը միտված պետական քաղաքականության ազդեցությունը գյուղատնտեսական ապրանք արտադրողների վրա», ՀՀ Սոցիալ-Տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները Գիտական հոդվածներիժողովածու-2(18)Երևանի «Անանիա Շիրակացի» համալսարան, հրատ. 2013թ.,էջ 195-202

ТАДЕВОСЯН ГАМЛЕТ АШОТОВИЧ

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЭКСПОРТНОЙ СТРАТЕГИИ ПЕРЕРАБАТЫВАЮЩИХ ОРГАНИЗАЦИЙ
(по материалам РА)

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Эканомика, управление хозяйством и его секторами”.

Защита диссертации состоится 12-го декабря 2014г. в $15^{\underline{00}}$ часов, на заседании специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвещена проблеммам разработки экспортной стратегии перерабатывающих предприятий Армении и осуществлению ключевых мероприятий государственной политики, направленных на выход на зарубежные рынки и развитыию экспортного потенциала республики. Для достижения этой цели в диссертации были поставлены и решены следующие проблемы:

- Определить характер экспортной стратегии и специфику их внедрения в Армении,
- Проанализировать методы и аппарат разработки и реализации экспортной стратегии,
- Изучить международный опыт экспортной политики и оценить возможности ее адаптации в Армении,
- Проанализировать структуру внешних торговых отношений РА и оценить перспективы участия в них перерабатывающих предприятий ,
- Оценить роль перерабатывающих предприятий в деле развития промышленности и разработать механизмы укрепления их взаимосвязей и взаимосогласованности,
- Предложить основные функции при реализации экспортной политики государства, обосновать их существенность, а также разработать методы расширения возможностей перерабатывающих предприятий в сфере экспорта,
- Выявить существенные риски, связанные с процессом экспорта, и предложить эффективные подходы для управления ими,

- Разработать план приоритеных действий по страхованию рисков экспортирующих перерабатывающих предприятий,

На основе проведенных в диссертации исследований и анализа, получен ряд результатов, научная новизна которых состоит в следующем:

- Для развития экспорта и проведения мероприятий по достижении стабильного положения на зарубежных рынках, для экономических субьектов разработана экспортная стратегия, которая представляет из себя скоординированный долгосрочный комплексный план действий,

- С целью обеспечения стабильной деятельности перерабатывающих предприятий Армении и оценивая возможные риски при регулировании всесторонних взаимоотношений в цепочке – “производитель-переработчик- дистрибьютор-потребитель”, предлагаются пути внедрения системы страхования в сфере агробизнеса,

- Для ведения обоснованной экспортной политики армянскими перерабатывающими предприятиями, на основе современного количественного анализа была разработана система выбора матрицы альтернативных рынков экспорта,

- С целью стимулирования экспорта путем содержания и расширения автомагистралей межгосударственного значения, рекомендовано создать специальный фонд, в качестве источника финансирования которого рассматриваются взимаемые сборы за движение автотраснспорта и осуществление грузоперевозок, до того, как будет введен единый налог.

- С целью развития экспортного потенциала на основе единой правовой структуры, регулирующей экспортную деятельность предложена бизнес –модель, которая позволяет всесторонне продвигать процесс экспорта и существенно повысить его эффективность.

WAYS OF IMPROVEMENT OF AN EXPORT STRATEGY OF

PROCESSING ORGANIZATIONS

(by material of RA)

The abstract of the dissertation for the pursuing degree of PhD of Economics in the field 08.00.02- "Economy, Management of Economics and its Sectors".

The defense of the dissertation will take place at $15^{\underline{00}}$ on December 12, 2014 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

Abstract

Dissertation is dedicated to the problems of processing of an export strategy of processing enterprises of Armenia and the implementation of the key actions of the state politics directed to the access to foreign markets and development of export potential of the republic. To achieve this goal in dissertation were formulated and solved the following problems:

• Define the nature of export strategy and the specification of their implementation in Armenia,

• Analyze the methods and apparatus of the development and implementation of export strategy,

• Study the international experience of export politics and to estimate the abilities of its adaptation in Armenia

• Analyze the structure of foreign trade relations of the Republic of Armenia and estimate the prospects for participation in the processing enterprises,

• Estimate the role of processing enterprises in the development of the industry and to develop mechanisms to strengthen their relationships and interconsistency,

• Offer the basic functions in the implementation of the export politics of the state, to prove their importance, and to develop methods of enlargement of processing enterprises in the field of exports,

• Identify the significant risks associated with the process of export, and to offer effective approaches to their management,

• Develop a plan of priority actions on risk insurance of exporting processing enterprises,

On the basis of a dissertation research and analysis, a series of results were received, scientific novelty of which is as follows:

• To export development and implementation of measures for achieving stability in foreign markets for the economic subject's export strategy is developed, which is a long-term coordinated combined action plan,

• In order to ensure the stable activity of the processing enterprises of Armenia and assessing the risks involved in the regulation of a comprehensive relationship in the chain - "producer-processor - distributor -consumer -", is suggested for the directions of insuring in agribusiness,

• To maintain a reasonable export politics by Armenian processing enterprises on the basis of modern quantitative analysis system

of the choice of matrix of

alternative export markets was developed,

• In order to stimulate exports by maintaining and expanding international highways,

it is recommended to create of a special fund as a source, financing of which is considered the fees charged for the movement of auto transportation and cargo transportation, before unified tax will be introduced.

• To develop the export potential on the basis of unified legal structure regulating the export activities, a business-model has been offered, which allows to comprehensively promote the export process and significantly improve its efficiency.